ՌԴ-ի հանդեպ Ի. Ալիևի նախաձեռնած դեմարշի ներքաղաքական համատեքստը

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 24.02.2025 թ.[1]

Բաքվի և Մոսկվայի միջև լարվածությունը շարունակում է աճել, և ճգնաժամի խորացման նախաձեռնողը հիմնականում Ադրբեջանն է:

Քաղաքական և դիվանագիտական հակամարտության պաշտոնական պատճառը 25.12.2024 թ. Ղազախստանի Ակտաու քաղաքում «Ադրբեջանական ավիաուղիների» *(AZAL)* մարդատար ինքնաթիռի վթարի հետ կապված միջադեպն էր[2]: Աղետից անմիջապես հետո ԱդրՀ կառավարական շրջանակներին մոտ կանգնած ԶԼՄ-ներն ամբողջ պատասխանատվությունը դրեցին ռուսական կողմի վրա՝ նրա ՀՕՊ-ին և Քաղաքացիական ավիացիայի ծառայությանը մեղադրելով անփութության և ոչ արհեստավարժության մեջ:

Նախագահ Իլհամ Ալիևի 29.12.2024 թ. ելույթը պաշտոնական մակարդակի հասցրեց ՌԴ դեմ Ադրբեջանի պահանջները՝ դրանով իսկ քաղաքականացնելով միջադեպը[3]: Իր ելույթում Ադրբեջանի ղեկավարը վրդովմունք էր հայտնել ոչ այնքան ՀՕՊ համակարգի հրթիռով սխալմամբ օդանավի վրա հարձակվելու, որքան, նրա իսկ խոսքով, պաշտոնական Մոսկվայի՝ պատասխանատվությունից խուսափելու ջանքերի և իր մեղքը չընդունելու համար: Ի. Ալիևի՝ Ռուսաստանին ուղղված գլխավոր մարտահրավերն այն հանգամանքն էր, որ նրա մեղադրանքները հնչել էին մինչ միջազգային հետաքննության մեկնարկը և դրա նախնական արդյունքների հրապարակումը:

Չնայած դրան, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը երկու անգամ զանգահարել է Ի. Ալիևին և, ըստ ԱդրՀ ԶԼՄ-ների, ներողություն խնդրել տեղի ունեցածի համար և, ըստ ռուսական ԶԼՄ-ների, իր ադրբեջանցի գործընկերոջը կոչ արել սպասել հետաքննության պաշտոնական արդյունքներին: Այնուամենայնիվ, Ի. Ալիևը շարունակեց համառորեն հավատարիմ մնալ ճգնաժամի խորացման ընթացքին: 06.01.2025-ին նա նորից հրապարակային ելույթ ունեցավ՝ կրկնելով արդեն իսկ հնչեցրած թեզերը և *«արդարություն»* պահանջելով[4]: Հետագա իրադարձությունները

---

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 18.02.2025 թ.:

[2] «Օդային վթար Ակտաուում». Ինտերֆաքս (ռուս.), 29.12.2024–04.02.2025, https://www.interfax.ru/chronicle/aviakatastrofa-v-aktau.html/ (բեռնման օրը՝ 13.02.2025):

[3] «Ալիև. Ռուսաստանը պետք է ընդունի իր մեղքը և ինքնաթիռի կործանման հետ կապված փոխհատուցում տրամադրի»: «Ամերիկայի ձայն» (ռուս.), 29.12.2024, https://www.golosameriki.com/a/azerbaijan-s-president-says-crashed-jetliner-was-shot-down-by-russia-unintentionally-/7917549.html/ (բեռնման օրը՝ 13.02.2025):

[4] «Պահանջում ենք արդարություն». Ալիևը Ռուսաստանին մեղադրել է AZAL ինքնաթիռի կործանման մեջ և կոչ արել պատժել մեղավորներին»: BBC NEWS (ռուս.), 06.01.2025, https://www.bbc.com/russian/articles/c047w9xd1gdo (բեռնման օրը՝ 14.02.2025):

միայն նպաստեցին ադրբեջանա-ռուսական հարաբերություններում լարվածության աճին: 22.01.2025 թ. Ի. Ալիևը Դավոսի տնտեսական համաժողովի ժամանակ հանդիպեց Ուկրաինայի նախագահ Վ. Զելենսկու հետ և հատուկ ջերմությամբ պահեց իրեն՝ ի ցույց դնելով Կիևի հանդեպ *AZAL* ավիաընկերության հետ տեղի ունեցած միջադեպին առնչություն ունենալու վերաբերյալ պահանջների բացակայությունը: Այնուհետև, 05.02.2025-ին Ադրբեջանի առաջնորդը հատուկ կարգադրությամբ Ուկրաինային հատկացրեց 1 մլն դոլար՝ ՌԴ ԶՈՒ կողմից ավերված էներգետիկ ենթակառուցվածքի օբյեկտների վերականգնման համար, ինչը ռուսական քաղաքական շրջանների կողմից ընկալվեց որպես Մոսկվայի դեմ նպատակաուղղված դեմարշ: Այնուհետև, մեկ շաբաթ առաջ ծանուցումից հետո, 11.02.2025 թ. Բաքուն ամբողջությամբ կասեցրել է ռուսաստանյան «Ռուսհամագործակցություն» («Ռոսսոտրուդնիչեստվո») գործակալության գործունեությունը[5] և փակել Բաքվում դրա արտասահմանյան ներկայացուցչությունը՝ «Ռուսական տունը», պաշտոնապես նրա քայլը նշելով որպես *«պատշաճ գրանցման բացակայություն»*[6]: Ավելին, հայտարարվեց, որ կսահմանափակվի ռուսաստանյան *Sputnik* լրատվական գործակալության Բաքվի մասնաճյուղի աշխատանքը: Եվ, վերջապես, ադրբեջանական աղբյուրներն այս իրադարձությունների համապատկերում հաղորդում էին, որ իբր Բաքվում բացահայտվել է ԱդրՀ նախկին բարձրաստիճան պաշտոնյաների մի խումբ, որը գործում է հօգուտ ՌԴ շահերի[7]: ԱդրՀ ԶԼՄ-ները սկսեցին ենթադրություններ անել, թե «*բացահայտված գործակալները*» սերտորեն համագործակցել են Բաքվի «Ռուսական տան» հետ, որն, իբր, իրականում դիվերսիոն գործողություններ է իրականացրել ԱդրՀ-ում Ռուսաստանի հատուկ ծառայությունների հովանու ներքո:

«Ռուսհամագործակցության»/«Ռուսական տան» հետ կապված դեպքը ցույց տվեց Բաքվի հստակ մտադրությունը՝ ընդլայնելու Մոսկվայի հետ քաղաքական և դիվանագիտական դիմակայության ճակատը: Արդյունքում ռուսաստանյան քաղաքական շրջաններում այն ընկալումն առաջ եկավ, որ *AZAL* ինքնաթիռի կործանման հետ կապված միջադեպն Ադրբեջանում հակառուսական տրամադրությունների աճի ոչ թե պատճառը, այլ պատրվակն էր՝ Ի. Ալիևի կողմից մտածված քաղաքական խաղաքայլ՝ ադրբեջանա-ռուսական հարաբերություններում ճգնաժամ առաջացնելու համար :

ԱՌՎԱԿ կենտրոնն արդեն անդրադարձել է միջազգային պրակտիկայում առկա

[5] Անկախ Պետությունների Համագործակցության, արտերկրում ապրող հայրենակիցների և միջազգային մարդասիրական համագործակցության գործերով դաշնային գործակալությունը (Ռոսսոտրուդնիչեստվո) ստեղծվել է 2008 թ. ՌԴ Նախագահի հրամանագրով: 2021 թ. արտերկրում գործակալության ներկայացուցչությունները ստացել են «Ռուսական տուն» ոչ պաշտոնական անվանումը:

[6] «Բաքվի ռուսական տանը պատմել են գործունեության դադարեցման մասին». РИА Новости, (ռուս.), 11.02.2025, https://ria.ru/20250211/baku-1998623849.html/ (բեռնման օրը՝ 14.02.2025):

[7] «Ադրբեջանում ԱԳՆ նախկին ղեկավարին և այլ նախկին պաշտոնյաներին մեղադրել են Ռուսաստանի օգտին լրտեսության մեջ». Armenia News (ռուս.), 10.02.2025, https://news.am/rus/news/865990.html/ (բեռնման օրը՝ 13.02.2025):

օրինակների, երբ քաղաքացիական ինքնաթիռի ոչ միտումնավոր խոցումը բարդություններ չի առաջացրել բարեկամ պետությունների հարաբերություններում[8]: Միջազգային պրակտիկան հուշում է, որ նման ողբերգական միջադեպերի քաղաքական հետևանքների վերացումն իրականացվում է առանց անհարկի հրապարակայնության՝ փոխադարձ հարգանքի և կողմերի շահերը հաշվի առնելու հիման վրա: Ըստ էության, Վ. Պուտինն առաջարկել է Ի. Ալիևին հավատարիմ մնալ այս գործելակերպին և բոլոր հարցերը լուծել առանց խնդիրը քաղաքականացնելու՝ «*բարեկամության և գործընկերության*» ոգով: Ադրբեջանի առաջնորդը, ըստ ամենայնի, որոշել է չընդառաջել իր ռուս գործընկերոջը, ինչի մասին վկայում է միջպետական ճգնաժամի սաստկացող բնույթը նույնիսկ երկու հեռախոսազանգից հետո:

Ի. Ալիևի՝ ՌԴ հետ հարաբերությունների տոնայնությունը կտրուկ փոխելու դրդապատճառների վերաբերյալ փորձագիտական կարծիքների դիտարկումը հիմնականում կարող է հանգեցնել այն թեզին, որ Բաքուն սկսել է նեղվել Մոսկվայի հետ իր «*դաշինքից*»: ՌԴ-ն, փաստորեն, նպաստեց Լեռնային Ղարաբաղում հայկական պատշաճ դիմադրության համահարթեցմանը և ԼՂՀ վերացմանը, ինչից հետո նրա զինված զորակազմը վերջնականապես լքեց Ադրբեջանի տարածքը: Ակնհայտ կերպով այլևս հրատապ չէ Ռուսաստանի ԱԴԾ-ի վերահսկողությանը փոխանցմամբ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը» «*հատելու*» տարբերակը, ուստի Բաքուն հետայսու շահագրգռված չէ հույսը դնել Մոսկվայի վրա, որը սպառել է իր նախկին ազդեցությունը Երևանի քաղաքական իրավիճակի վրա: Ավելին, Մոսկվայի հետ սերտ գործընկերությունը կամ դաշնակցումը կարող է «*թունավոր ակտիվ*» դառնալ ավելի լայն աշխարհաքաղաքական համատեքստում: Բաքվի այս մտահոգությունը կարող էր ավելի սրվել Դ. Թրամփի վերընտրությունից հետո, որի արտաքին քաղաքականությունն ու ռազմավարությունն այն ժամանակ դժվար էր կանխատեսել: Այս իրավիճակում Ի. Ալիևը կարող է դիմել ԱՄՆ-ի հետ ռազմավարական մերձեցման գնալու իր պատրաստակամության ցուցադրմանն ամերիկյան նոր վարչակազմին՝ տարածաշրջանում Վաշինգտոնի առանցքային գործընկերը դառնալու հեռանկարով: Հնարավոր է, որ հենց այդ նպատակով է Ադրբեջանի և Իրանի միջև հերթական դիվանագիտական աղմկահարույց միջադեպը հարուցվել է դեկտեմբերի վերջին և 2025 թ. հունվարի սկզբին, որի ընթացքում կողմերը մեղադրանքներ են փոխանակել ինքնիշխանության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի և հարաբերություններում ճգնաժամը սրելու համար[9]: Սակայն այս միջադեպը մնաց զուգահեռ ընթացող ադրբեջանա-ռուսական

[8] «AZAL օդանավի կործանումն Ի. Ալիևի ռուսաստանյան քաղաքականության համատեքստում». ԱՌՎԱԿ հայկական վերլուծական կենտրոն. 30.12.2024, https://surl.li/xxqpje (բեռնման օրը՝ 14.02.2025):

[9] «Ադրբեջանի ԱԳՆ-ն բողոք է հայտնել պաշտոնական Թեհրանին». Кавказский узел, (ռուս.), 01.01.2025, https://www.kavkaz-uzel.eu/articles/407187/ (բեռնման օրը՝ 14.02.2025):

հակամարտության ստվերում, ինչն Ի. Ալիևին թույլ տվեց ցույց տալու Արևմտյան Ասիայում ԱՄՆ-ի գլխավոր հակառակորդ ՌԴ-ից կտրուկ հեռանալու իր պատրաստակամությունը:

«*ՌԴ-ի և ԻԻՀ-ի միջև համապարփակ ռազմավարական գործընկերության մասին պայմանագրի*» նախապատրաստման և 2025 թ. հունվարի 17-ին ստորագրման համապատկերում Բաքվի համար հատկապես կարևոր էր Վաշինգտոնին նմանատիպ ազդանշանների հաղորդումը[10]: Հաշվի առնելով, որ Մոսկվան և Թեհրանն Ադրբեջանին հատուկ նշանակություն են տալիս իրենց աշխարհառազմավարական մերձեցման և «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային ու հաղորդակցության գլոբալ ճանապարհի ստեղծման համատեքստում, Բաքուն պետք է ցուցադրի իր անկախությունը: Մասնավորապես, Ադրբեջանը պետք է ցույց տա, որ ինքը շահագրգիռ մասնակից չէ ձևավորվող նոր, ըստ էության, հակաարևմտյան, աշխարհաքաղաքական դաշինքին, և որ որոշակի աջակցության դեպքում՝ պատրաստ է նվազագույնի հասցնել ՌԴ-ի և ԻԻՀ-ի միջև կամուրջի իր դերը:

Այս կապակցությամբ առանձնահատուկ հետաքրքրություն է առաջացնում այն փաստը, որ ռուս-իրանական համաձայնագրի ստորագրման նախօրեին Վ. Պուտինն ու Ի. Ալիևը ծրագրել էին հանդիպում ունենալ Մոսկվայում, որի ընթացքում, ինչպես կարելի է ենթադրել, ի թիվս այլ խնդիրների, պետք է ձեռք բերվեին պայմանավորվածություններ «Հյուսիս-Հարավ» նախագծին Ադրբեջանի ինտեգրման խորացման և ռուս-իրանական գլոբալ նախագծերի իրականացմանը խոչընդոտող իրավական, քաղաքական և տեխնիկական խնդիրների արագ լուծման վերաբերյալ: Հանդիպումը նախատեսված էր հենց 25.12.2024-ին, և *AZAL* ինքնաթիռի կործանման պահին Ադրբեջանի ղեկավարի ինքնաթիռն արդեն Մոսկվայի երկնքում էր: Թեև դա կարող է պարզ զուգադիպություն լինել, բայց փաստն այն է, որ ադրբեջանական քաղաքացիական ինքնաթիռի կործանումը դարձավ Վ. Պուտինի համար շատ կարևոր հանդիպումից Ի. Ալիևի հրաժարման պատճառ (կամ պատրվակ): Ադրբեջանի ղեկավարը հրամայել էր ետ շրջել ինքնաթիռը և վերադառնալ Բաքու՝ անհայտ թողնելով մոսկովյան հանդիպման օրակարգը[11]:

Հենց վերոնշյալ հանգամանքներով են փորձագետները հիմնականում պարզաբանում Ի. Ալիևի վարքագծի դրդապատճառները և Մոսկվայի դեմ նրա որդեգրած հռետորաբանությունը: Սակայն, ադրբեջանա-ռուսական ճգնաժամի արտաքին քաղաքական տեսանկյունները դիտարկելիս նրանք մեծամասամբ անտեսում են Ադրբեջանի ներքաղաքական օրակարգի մի շարք գործոններ, որոնք նույնպես կարող

[10] «Ռուսաստանն ու Իրանը ստորագրեցին Համապարփակ ռազմավարական գործընկերության պայմանագիր», Ведомости (ռուս.), 17.01.2025, https://www.vedomosti.ru/politics/articles/2025/01/18/ 1086965-rossiya-i-iran-podpisali-dogovor-o-vseobemlyuschem-strategicheskom-partnerstve/ (բեռնման օրը՝ 14.02.2025):

[11] «Ալիևն ընդհատել է իր այցը Ռուսաստան՝ Ակտաուում AZAL ինքնաթիռի կործանման պատճառով». Ինտերֆաքս, 25.12.2024, https://www.interfax.ru/world/1000549 / (բեռնման օրը՝ 14.02.2025):

են անուղղակի առնչություն ունենալ Բաքու-Մոսկվա հարաբերությունների վատթարացման հետ: Խոսքն, առաջին հերթին, վերաբերում է նախկին բարձրաստիճան պաշտոնյաների լրտեսական ցանցի ենթադրյալ բացահայտմանը և Բաքվի «Ռուսհամագործակցության» աշխատակազմի հետ նրանց «*գաղտնի կապերին*»: Խոսքը նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար, Հ. Ալիևի համախոհ Ռամիզ Մեհթիևի, ԱԳ նախկին նախարար Էլմար Մամեդյարովի, մշակույթի նախկին նախարար Աբուլֆաս Գարաևի, երիտասարդության և սպորտի նախկին նախարար Ազադ Ռահիմովի և Ազգային անվտանգության նախարարության (ԱԱՆ) նախկին ղեկավար Էլդար Մահմուդովի մասին է: Բացառությամբ Է. Մամեդյարովի և Է. Մահմուդովի, մյուս անձինք պատկանում են Հ. Ալիևի հիմնադրած «Նոր Ադրբեջան» կուսակցության հնաբնակների թիմին և 2019–2021 թթ. ընթացքում տարբեր պատրվակներով ազատվել են զբաղեցրած պաշտոններից: Ինչպես ընդունված է համարել Ադրբեջանի ընդդիմադիր շրջանակներում, նրանք պատկանում էին ադրբեջանական քաղաքական վերնախավի ռուսամետ ուժերին, ուստի նրանց հրաժարականները ժամանակի առումով հիմնականում համընկնում էին Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի նախաշեմի հետ և ուղղակիորեն աղերսվում էին ԱդրՀ քաղաքական կյանքում Թուրքիայի դերի ամրապնդմանը:

Է. Մահմուդովը կարիերային բարձունքների է հասել Ի. Ալիևի օրոք, սակայն արդեն 2015 թ. ազատվել է աշխատանքից և հեղինակազրկվել: Նրա հեռացման ձևական պատճառը եղել է, այսպես կոչված, «*ԱԱՆ գեներալների գործը*»՝ կապված պետական անվտանգության համակարգում կոռուպցիայի և Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցների կողմից երկրի խոշոր և միջին բիզնեսի նկատմամբ համատարած դրամաշորթության հետ[12]: Այնուհետև, որոշ ադրբեջանցի փորձագետներ Է. Մահմուդովի հեղինակազրկումը կապեցին նրա ղեկավարած գերատեսչության և Ռուսաստանի ու Իրանի հատուկ ծառայությունների միջև անօրինական կապերի կասկածների հետ[13]:

Եվ, այնուամենայնիվ, ի տարբերություն ԱԱՆ այլ բարձրաստիճան պաշտոնյաների, Է. Մահմուդովը չի ձերբակալվել[14]: Ենթադրաբար այն պատճառով, որ նա բազմաթիվ մեղադրական ապացույցներ ուներ Ալիևների ընտանիքի վերաբերյալ: Ի. Ալիևի հատուկ հրամանով հատուկ ծառայության նախկին պետին կարգադրվել է ապրել տնային

[12] «Մահմուդովի հրաժարականի պատճառ փորձագետները նշել են Ադրբեջանի տնտեսական անվտանգության մեջ առկա անցքերը». Кавказский узел, (ռուս.), 19.10.2015, https://www.kavkaz-uzel.eu/articles/270878/ (բեռնման օրը՝ 15.02.2025):

[13] «Փորձագետները Ադրբեջանի հատուկ ծառայություններում լրտեսական սկանդալը կապում են Իրանի գործունեության հետ». Кавказский узел, 30.12.2018, https://www.kavkaz-uzel.eu/articles/329810/ (բեռնման օրը՝ 15.02.2025):

[14] «Գեներալների գործից» հետո ԱԱՆ-ը լուծարվեց և դրա հիմքի վրա ստեղծվեցին Ադրբեջանի Ազգային անվտանգության ծառայությունը և Արտաքին հետախուզության ծառայությունը:

կալանքի ներքո: Նրան հատուկ հսկողության տակ են դրել, հեռախոսները գաղտնալսել, համապատասխան ծառայությունների միջոցով խստիվ կարգավորվել արտաքին աշխարհի հետ բոլոր շփումները:

Է. Մամեդյարովը նույնպես Հ. Ալիևի կադրը չէր համարվում, սակայն հետագայում նա նույնպես հայտնվեց ՌԴ-ի հետ սերտ համագործակցության մեջ կասկածյալների շրջանում՝ գուցե ոչ առանց Անկարայի հանձնարարականի: Ռ. Մեհթիևին, Է. Մամեդյարովին, Ա. Գարաևին, Ա. Ռահիմովին «*տնային կալանք*» չէին նշանակել, բայց կասկած չկա, որ աղմկահարույց պաշտոնանկություններից հետո երկար տարիներ շարունակ ուշի ուշով հետևել են նրանց ամեն մի քայլի:

Ադրբեջանա-ռուսական հարաբերությունների ճգնաժամի համատեքստում երկար ժամանակ շնորհազուրկ վիճակում հայտնված քաղաքական գործիչների հետապնդումները որևէ կիրառական օգուտ չեն կարող տալ Ի. Ալիևին: Հատկապես հաշվի առնելով ներկայումս իրենց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ ապացույցների բացակայությունը և այն փաստը, որ ադրբեջանական ՁԼՄ-ներում թվարկված այդ անձինք չեն կարող լքել երկիրն ու գտնվում են ադրբեջանական հատուկ ծառայությունների ուժեղացված հսկողության ներքո: Հաշվի առնելով այս ամենը՝ կասկածի տեղիք է տալիս ռուսական հատուկ ծառայությունների հետ նրանց համագործակցության հենց ֆիզիկապես հնարավորությունը, ինչի մասին խոսվել է Ադրբեջանում: Հետևաբար, այդ անձանց նկատմամբ հետապնդումները վերսկսելու նախաձեռնությունն ուղղված է ոչ այնքան ադրբեջանա-ռուսական դիմակայության ընդհանուր համատեքստում նոր տարրերի ավելացմանը, որքան որ այդ դիմակայության միջոցով որոշակի ներքաղաքական խնդիրների լուծմանը: ՌԴ-ի հետ հարաբերությունների ճգնաժամը, ի թիվս այլ խնդիրների, կարող է հարմար պատրվակ հանդիսանալ դեռևս Հեյդար Ալիևի օրոք ձևավորված հին կազմավորման «*ռուսամետ*» ադրբեջանական վերնախավի ներկայացուցիչների հետ հաշիվները վերջնականապես մաքրելու համար:

Ադրբեջանում այդ խմբերը սովորաբար անվանում են «երազների կլան»[15]: Հենց այս կլանն էր, որ, ըստ էության, երկար տարիներ կառավարեց հանրապետությունը և կարողացավ վերահսկողություն հաստատել նրա ֆինանսա-տնտեսական ակտիվների զգալի մասի վրա: Հ. Ալիևի մահից հետո «*երազները*» «ժառանգաբար» անցան Ի. Ալիևին՝ Ադրբեջանում կազմակերպելով իշխանության փոխանցումը՝ «*թույլ ու անփորձ*» նոր նախագահի օրոք իրենց դիրքերը պահպանելու հաշվարկով: Սակայն Ի. Ալիևը, հաստատվելով նոր պաշտոնում, ջանքեր գործադրեց ազատվելու «*հին գվարդիայի*» չափից ավելի խնամակալությունից[16]:

---

[15] Այսինքն՝ *«Երևանցի ադրբեջանցիները»*, սահմանում, որ վերաբերում է Հայաստանից եկած մարդկանց, որոնցով իրեն շրջապատել էր Ալիև ավագը:.

[16] «Իլհամի թագավորությունը». Коммерсантъ, (ռուս.), 31.10.2005, https://www.kommersant.ru/doc/

Նախագահի և նրա նախորդի թողած շրջապատի ներքաղաքական պայքարը տևեց շուրջ 15 տարի, որի ընթացքում Ի. Ալիևն իր հավակնոտ կնոջ աջակցությամբ, որպես «երազների» հակակշիռ, ձևավորեց, այսպես կոչված, «*ապշերոնյան կլանը*» կամ «*Փաշաևների կլանը*»՝ Մեհրիբան Ալիևայի (օրիորդական ազգանունը՝ Փաշաևա) հոր, եղբայրների և զարմիկների գլխավորությամբ: Այս խումբն աստիճանաբար պետական կառավարման համակարգ մտցրեց հավատարիմ գործիչների և վերահսկողություն հաստատեց երկրի ֆինանսատնտեսական ռեսուրսների զգալի մասի վրա, որոնք նախկինում գտնվում էին Հ. Ալիևի «հին գվարդիայի» վերահսկողության ներքո:

2017 թ. ԱդրՀ փոխնախագահի նորաստեղծ պաշտոնում առաջին տիկին Մեհրիբան Ալիևայի նշանակումը բաց հայտ էր «*ապշերոնյան կլանի*» կողմից երկիրը ղեկավարելու համար: Սակայն «Փաշաևների» հաղթանակի մեծարումը եկավ 2019 թ., երբ պաշտոնից հեռացվեց «*երազների կլանի*» ղեկավարը և իշխանության մեջ գտնվող «*գորշ կարդինալը*»՝ նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեհթիևը: Ասում էին, որ նա «*Փաշաևների կլանի*» ամենանշանակալի հակառակորդն էր և Մեհրիբան Ալիևայի քաղաքական հավակնությունների հիմնական քննադատը: Ռ. Մեհթիևին, իսկ հետագայում նաև նրա կողմնակիցներին պետական կառույցներից հեռացնելուց հետո Ադրբեջանում սկսեցին ի հայտ գալ գործընթացներ, որոնք վկայում են այն մասին, որ Ալիևները պատրաստվում են իշխանության նոր ներքին տարանցման[17]: Թերևս դա արդեն կարող էր տեղի ունենալ, և հաջորդ նախագահ դառնար Մ. Ալիևան, եթե մինչ այդ աշխարհաքաղաքական բարենպաստ իրավիճակ չստեղծվեր, այսպես կոչված, *«Ղարաբաղյան երկրորդ պատերազմի»* սկզբի համար: Բաքվում, թերևս ոչ առանց Անկարայի կողմից հուշելու, որոշում կայացվեց հետաձգել այդ տարանցումը, քանի որ պատերազմի արդյունքներն ու դրա հետևանքներն այն ժամանակ անկանխատեսելի էին, և իշխող ընտանիքում նման փոխատեղման նախաձեռնությունը կարող էր վտանգավոր լինել:

Սակայն Բաքուն հաղթեց պատերազմում և, հաշվի առնելով ադրբեջանական հանրության շրջանում Ի. Ալիևի անձնական հեղինակության կտրուկ ամրապնդումը, մեկ ընտանիքի ներսում իշխանության տարանցմամբ խուսավարելու անհրաժեշտությունը զգալիորեն կորցրեց իր հրատապությունը: Սակայն, ամենայն հավանականությամբ, գերագույն իշխանությունը Մ. Ալիևային փոխանցելու ծրագիրը երկարաժամկետ չի հետաձգվել: Բանն այն է, որ «*ղարաբաղյան հաղթանակի*» ցնծությունը չի կարող հանրային վստահության և օրինականության անվերջ պաշար ապահովել Ի. Ալիևի համար: Երկրում հետզհետե վատթարանում է սոցիալ-տնտեսական վիճակը, և

622324 (բեռնման օրը՝ 14.02.2025):

[17] «Արիֆ Յունուսով. Վաղ թե ուշ Ադրբեջանում նույնպես տեղի կունենա իշխանափոխություն՝ սոցիալական պայթյունի հետևանքով». ՍիվիլՆեթ, 29.11.2019, https://www.civilnet.am/news/195239/(բեռնման օրը՝ 15.02.2025).

հասարակությունը հարցնում է, թե ինչու «*տարածքային ամբողջականության և ինքնիշխանության վերականգնումը*», ինչպես խոստացվել էր, դրականորեն չի ազդում հասարակ քաղաքացիների կենսամակարդակի վրա: Ընդհակառակը, ԱդրՀ ռազմականացումը պահանջում է զգալի ֆինանսական ռեսուրսներ, նավթի և գազի արդյունահանման ծավալներն անընդհատ նվազում են, սպառողական գները՝ բարձրանում, իսկ տնտեսությունը չի կարող դուրս գալ հետընթացից: Իրավիճակը սրում է պետական համակարգում առկա մեծածավալ կոռուպցիան: Ընդհանուր առմամբ, երկրում առկա ներքաղաքական իրողություններն արմատական քայլեր են պահանջում: Այս համատեքստում կարելի է զուգահեռներ անցկացնել 2019 թ. հետ, երբ Իլհամ և Մեհրիբան Ալիևները, ըստ էության, լայնածավալ զտումների ենթարկեցին պետական ապարատը, «*մերկացրին*» Հ. Ալիևի՝ «*երազների կլանը*» ներկայացնող հին կադրերի «*ապակառուցողական գործունեությունը*», ինչն առնչվում էր ռուսական շահերի հետ, ցրեցին Միլլի Մեջլիսը և նշանակեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Բայց այն ժամանակ տարանցման նախաձեռնությունը ժամանակավորապես կասեցվեց: Հիմա տեխնիկական առումով այն կարելի է հասցնել իր տրամաբանական ավարտին: Դրա մասին կարող է վկայել նաև մի ախտանշանակ հանգամանք, որի նշանները նկատվում են 2023 թ. Լեռնային Ղարաբաղում «*հաղթական պատերազմից*» հետո:

Բանն այն է, որ Ադրբեջանում հստակ տեսանելի է Հեյդար Ալիևի պաշտամունքի ապամոնտաժման գործընթացը: «*Ազգային առաջնորդի*» վախեցած կադրերի նոր հալածանքն ակնհայտորեն նպատակ ունի ոչ միայն ոչնչացնելու երկրի հասարակական-քաղաքական գործընթացների վրա նրանց ազդեցության մնացորդները, այլև արմատախիլ անելու նրա պաշտամունքը, որի «ճարտարապետը» նույն ինքը՝ Ռամիզ Մեհթիևն է: Հենց նա դարձավ «*ազգային առաջնորդի պաշտամունք*» ստեղծելու գաղափարի գլխավոր ջատագովը, մոդելավորեց և իրականացրեց Հ. Ալիևին որպես «*նորագույն ադրբեջանական պետականության հիմնադիր հոր*» մեծարման գաղափարական դոկտրինան և Հ. Ալիևի կենսագրության ուսումնասիրությունը հասցրեց նոր գիտության, որն Ադրբեջանում կոչվում է «հեյդարագիտություն»: Նա նաև դարձավ այս «գիտության» ամենահայտնի ներկայացուցիչը՝ բազմաթիվ գրքեր և մենագրություններ նվիրելով «*Հ. Ալիևի ֆենոմենի*» ուսումնասիրությանը[18]:

Պաշտամունք ստեղծելու Ռ. Մեհթիևի նախաձեռնությունն իր ժամանակին Հ. Ալիևի համախոհներին ոչ միայն օգնեց մնալ իշխանությունում և հզոր կլան ձևավորել, այլև, առաջին հերթին, իշխանության մնալու վստահելի հարթակ ստեղծեց Ալիև կրտսերի համար, որքան էլ որ տարօրինակ էր նրա պայքարը հոր կադրային ժառանգության դեմ:

[18] «Նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևի ելույթը». AzerTag (ռուս.), 02.10.2004, https://azertag.az/ru/xeber/vystuplenie_rukovoditelya_administracii_prezidenta_ramiza_mextieva-635184 (բեռնման օրը՝ 16.02.2025):

Սակայն ժամանակի ընթացքում հոգեբանական գործոնը սկսեց ծանրանալ քաղաքական նպատակահարմարության վրա: Որպես անհատ՝ Ի. Ալիևը միշտ էլ նեղվել է իր հոր պաշտամունքից, ով նախագահի պաշտոնում նրա օրինականության միակ աղբյուրն ու պաշարն էր և ստվերում է թողել նրա անձնական «*արժանիքները*»: «*Ղարաբաղյան պատերազմից*» հետո, որն Ալիևին ինքնավստահություն և հարգանք բերեց ադրբեջանական հանրության աչքում, նա սկսեց բացահայտ հեռանալ այս պաշտամունքի պահպանման քաղաքականությունից: Ադրբեջանի ներքաղաքական և գաղափարական օրակարգի դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ 2020-ականներից սկսած Հեյդար Ալիևի անունն ավելի ու ավելի քիչ է շրջանառվում ՁԼՄ-ներում ու պաշտոնական զեկույցներում, և նրա պաշտամունքի տարրերը գործնականում դուրս են մնացել իշխանությունների հատուկ ուշադրության շրջանակից: Ի. Ալիևն այլևս իր հորն ու նախորդին գովաբանող երկարատև ելույթներ չի ունենում, նա նվազագույնի է հասցրել մարզային այցելությունների ժամանակ «*ազգային առաջնորդի*» թանգարաններ և հուշարձաններ այցելելու նախկինում ավանդական դարձած արարողությունը: Նա դադարեցրել է արտերկրում Հ. Ալիևի անվան պուրակներ հիմնելու և նրա հուշարձանները կանգնեցնելու պրակտիկան:

Այս ամենը հուշում է, որ ներկա պահին Ալիև ավագի հիշատակի նկատմամբ վերաբերմունքի համատեքստում Ալիև կրտսերը սահմանափակվել է հորը և, առավելագույնը, իր քաղաքական նախորդին, բայց ոչ մի կերպ «*համազգային առաջնորդի*» մեծարելու շրջանակներում: Ըստ էության, սա «*համազգային առաջնորդի*» պաշտամունքի մեղմ ապամոնտաժման նշան է, և Ռ. Մեհթիևի նկատմամբ նոր հալածանքը, ի թիվս այլ իրողությունների, կարելի է մեկնաբանել որպես Հ. Ալիևի նախկին կերպարից գաղափարապես ձերբազատվելու վճռորոշ փուլ: Հաշվի առնելով Ադրբեջանի քաղաքական համակարգի ավտորիտար բնույթը՝ լիովին հասկանալի են նրա առաջնորդի գործողությունների հետևում ընկած հոգեբանական և հուզահակ դրդապատճառները: Կարելի է ենթադրել, որ եթե Մ. Ալիևան ձգտում է նախագահի կարգավիճակի, ապա ամուսինը պատրաստ է զիջել նրան այս հարցում, բայց մի պայմանով, որ պետք է բավարարվեն անձամբ «*համազգային առաջնորդ*» դառնալու իր հավակնությունները:

Այս վարկածի համատեքստում նոր շեշտադրումներ է ստանում ՌԴ ծառայության մեջ գտնվող «*լրտեսական ցանցի*» վերջնական պարտությունը՝ Ռ. Մեհթիևի գլխավորությամբ: Հ. Ալիևի և նրա շրջապատի իշխանությունը, ժամանակին արմատապես գտնվելով խորհրդային դարաշրջանի իրադրության մեջ, մեծապես հենվում էր Մոսկվայի վրա, և Ադրբեջանի ներկայիս նախագահը չի կարող հաշվի չառնել այդ հանգամանքը: Ուկրաինական հակամարտության խաղաղ ելքը, որը բարենպաստ է ՌԴ համար, կարող է դրդել Մոսկվային վերանայելու իր ադրբեջանական

քաղաքականությունը և այդ հարցում աջակցություն փնտրել «*հեյդարյան համախոհների*» շրջանում, որոնք միշտ էլ ընդհանուր լեզու են գտել Մոսկվայի հետ:

Չնայած այդպիսի սպառնալիքների ակնհայտ բացակայությանը, Բաքուն նման սքողված ազդանշաններ ստացավ Մոսկվայից, և դժվար թե Ի. Ալիևը չըմբռնի դրանց էությունը: Այս համատեքստում հարկ է որպես օրինակ հիշել Ադրբեջանի նախագահի աշխատանքային այցը ՌԴ 22.04.2024 թ.՝ Բայկալ-Ամուրյան մայրուղու (ԲԱՄ) շինարարության մեկնարկի 50-ամյակի տոնակատարության կապակցությամբ: Այնուհետև, համատեղ ելույթի ժամանակ Վ. Պուտինն իր հատուկ պատրաստված խոսքում քանիցս նշել է Հ. Ալիևի անունը, նրա անձնական դերը ԲԱՄ նախագծի իրականացման, ինչպես նաև հետխորհրդային շրջանում ադրբեջանա-ռուսական կապերի հետևողական խորացման գործում: Այս կերպ ՌԴ նախագահը հասկացրեց, որ Ադրբեջանը չպետք է շեղվի այս ավանդական ուղեգծից, որը երաշխավորում է հարավկովկասյան հանրապետության զարգացումն ու անվտանգությունը: Նշված հանդիպումը կայացել է Լեռնային Ղարաբաղից ռուսական «*խաղաղապահ զորակազմի*» վաղաժամ դուրսբերման մասին պայմանավորվածություն ձեռք բերելուց անմիջապես հետո, և Վ. Պուտինն Ի. Ալիևին ազդանշաններ լ է փոխանցել, որ նման զիջման դիմաց ցանկանում է Ռուսաստանի հետ հարաբերությունների համատեքստում նրան ընկալել բացառապես որպես իր հոր իրատեսական գործողությունների իրավահաջորդ: Եվ նաև, ակնհայտորեն, նա ակնարկել է, որ Ի. Ալիևին չի հաջողվի գերազանցել իր հոր և նախորդի հեղինակությունը[19]:

Այսպես թե այնպես, Ռ. Մեհթիևի և նրա համախոհների նկատմամբ քաղաքական հետապնդումը պետք է դիտարկել որպես խափանման միջոց, որը մի շարք առումներով որոշիչ է իշխող ընտանիքի և «*Փաշաևների կլանի*» համար:

Այսպես թե այնպես, Ռ. Մեհթիևի և նրա համախոհների քաղաքական հետապնդումը պետք է դիտարկել որպես կանխարգելիչ միջոց, որն ադրբեջանա-ռուսական հակասությունների կտրուկ սրման համատեքստում մի շարք բազմակողմ խնդիրներ է լուծում իշխող ընտանիքի և «*Փաշաևների կլանի*» համար: Սա, նախ և առաջ, մնացած այն ուժերի չեզոքացումն է, որոնք կարող են ենթադրաբար դիմադրություն առաջացնել բարձրագույն քաղաքական իշխանության «ռեբրենդինգի» համակարգին՝ ի դեմս Մեհրիբան Ալիևայի, սա նաև Հեյդար Ալիևի պաշտամունքի ապամոնտաժման գործնական գործընթացի սկիզբն է, ինչպես նաև քաղաքական վերնախավերի առանձին բեկորների վրա ռուսական ազդեցության «մաքրման» վերջին փուլը: Այս գործընթացն

[19] «Վլադիմիր Պուտինը և ԱդրՀ նախագահ Իլհամ Ալիևը Կրեմլում հանդիպել են Բայկալ-Ամուրյան երկաթուղու վետերան շինարարների և աշխատողների հետ՝ դրա շինարարության մեկնարկի 50-ամյակի կապակցությամբ»: Kremlin.ru (ռուս.), 22.04.2024, http://kremlin.ru/events/president/news/73904 (բեռնման օրը՝ 16.02.2025):

սկիզբ է առել Բաքվի և Մոսկվայի միջև հարաբերությունների ներկայիս ճգնաժամից շատ առաջ: Այն աղբյուրների վկայությամբ, որոնք հավակնում են, թե տեղյակ են Ի. Ալիևի վարչախմբի ներքաղաքական խոհանոցին, չնայած Մոսկվայի հետ բարեկամության նմանակմանը, Ալիևները վաղուց ընտրել են թուրք-իսրայելական և, ընդհանրապես, արևմտյան ուղեգիծը և ցանկացած պահի պատրաստ են ազդանշանի դեպքում ամբողջությամբ խզել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Նույնիսկ այլ կերպ վարվելու ցանկության դեպքում, նրանք այլևս ի զորու չեն դա անել՝ իրենց նոր հովանավորներից ամբողջովին կախված լինելու պատճառով[20]:

[20] «Իշխանության տարանցումն Ադրբեջանում. ի՞նչ է սպասում Ալիևներին 2020 թվականին», Իսմայիլ Շաբանով, Realtribune, (ռուս.), 18.01.2020, https://realtribune.ru/news-world-3469/ (բեռնման օրը՝ 16.02.2025):